«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 19.03.2026 թ. թիվ 160 Ն/Մ հրամանի

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 1, «23».02.2017 թ.
Փոփոխվել է՝
Արձանագրություն թիվ 4, «24».11.2022 թ.
Առ 29.11.2022 թ. փոփոխություններով
Արձանագրություն թիվ 9, «09».03.2023 թ.
Առ 13.03.2023 թ. փոփոխություններով
Արձանագրություն թիվ 8, «13».03.2026 թ.
Առ 19.03.2026 թ. փոփոխություններով

Վանաձոր 2026թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ինտեգրումը Բոլոնիայի գործընթացին ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի եւ ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կազմակերպմամբ: Մասնավորապես ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետեւաբար եւ իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ եւ միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:

Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարեւորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման եւ գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որը ենթադրում է մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

1. Սույն կանոնակարգը հիմնվում է «Կրթության մասին», «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2005 թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2007 թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի», «Ուսումնական ծրագրերի պլանների կրեդիտային հենքով վերակառուցման եւ կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույցի» եւ ՀՀ ԿԳՄՍՆ հրահանգչական նամակների վրա:
2. Սույն կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհրդում հաստատման օրից, եւ նույն ժամանակից ուժը կորցրած են ճանաչվում «ՎՊՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների եւ քննությունների կազմակերպման, գնահատման եւ հաշվառման կանոնակարգ»-ը՝ ընդունված Համալսարանի գիտական խորհրդում 29.10.2007 թ. եւ «ՎՊՀ-ում ակադեմիական կրեդիտների կուտակման եւ փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցը»՝ ընդունված Համալսարանի գիտական խորհրդում 07.03.2008 թ.:
3. Սույն կանոնակարգում ներկայացված են նաեւ կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, համակարգի բնութագրիչներ:

II. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետեւյալ սահմանումները եւ դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում եւ գործում են Համալսարանի բակալավրի եւ մագիստրատուրայի կրթական ծրագրերում.

-Բակալավրիատը բարձրագույն կրթության առաջին աստիճանն է, որը ներառում է 3-4 լրիվ ուսումնական տարիների ավարտուն դասընթացներ: Համալսարանում բակալավրիատի տեւողությունը 4 ուսումնական տարի է:

-Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է, որի տեւողությունը 1.5-2 տարի է, հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:

-Ասպիրանտուրան հետբուհական կրթության աստիճան է: Ասպիրանտուրայի տեւողությունն առկա ուսուցման համակարգում 3 տարի է, հեռակա ուսուցման համակարգում՝ 4 տարի:

-Ուսումնական տարին ուսանողի 40-շաբաթյա բոլոր տեսակի ուսումնական արդյունավետ աշխատանքների ժամանակն է, որից առնվազն 32 շաբաթը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին եւ իրականացվում է երկու կիսամյակներով:

-Կարողությունը (կոմպետենցիան) գիտելիքի, ընկալման, ունակությունների եւ -հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձեւավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական-ուսման տվյալ բնագավառի համար (առանձնահատուկ) եւ ընդհանուր (անկախ բնագավառից):

-Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա եւ (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը գնահատվում է համապատասխան գնահատման համակարգով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին:

-Կրթական (ուսումնական) մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է: Կրթական մոդուլի ուսուցման տեւողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանափակված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ:

-ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու եւ դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր

է, որը տրվում է ուսանողին՝ նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

III. ECTS ԿՐԵԴԻՏԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

5. ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային եւ ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար եւ գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին եւ պրակտիկաներին, կուրսային եւ ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը եւ դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը եւ այլն:
6. Կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը եւ չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարեւորությունը եւ մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը):
7. Կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին:
8. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)
9. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)
10. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)

IV. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

11. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժեւորման), կուտակման եւ փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի եւ բովանդակության ձեռքբերումից հետո:
12. Կրեդիտների կուտակման եւ փոխանցման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որում ուսանողի մեկ ուսումնական տարվա լրիվ ուսումնական աշխատածավալը չափվում է 60 ECTS կրեդիտով:

Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման եւ բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

13. ECTS համակարգի կարեւորագույն հատկանիշներն են՝

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային եւ ավարտական աշխատանքներին եւ այլն,
- կրթական ծրագիրը եւ դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը եւ ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները եւ հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման եւ գնահատման մեթոդները եւ այլն, հրապարակվում են նախապես եւ հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին եւ դասախոսներին):

V. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում.

ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների եւ կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի եւ բուհերի միջեւ,

բ) կրեդիտների կուտակում.

ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, որն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ:
Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով եւ ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

15. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են. գործում են մասնագիտական կրթական ծրագրեր (ԿԾ), որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային եւ ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ եւ այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային եւ ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով, կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման եւ որոշակի թվով կրեդիտների ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջեւ՝ ընդունող բուհի ծրագրերին համապատասխան:

16. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր եւ ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության եւ դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն:

VI. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՎԱԼԸ

17. Համալսարանում բակալավրի, մագիստրոսի եւ հետազոտողի կրթական աստիճաններում ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր (10% թույլատրելի շեղումով), ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ): Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 կրեդիտային միավորին:
18. Համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով: Ուսումնական կիսամյակների տեւողությունը 20 շաբաթ է, որի ընթացքում իրականացվում են տեսական ուսուցումը, ընթացիկ ստուգումները, ստուգարքներն ու քննությունները, ուսումնական, արտադրական եւ հետազոտական (մագիստրատուրայում) պրակտիկաները, բակալավրի ավարտական աշխատանքի եւ մագիստրոսական թեզի շարադրման ու պաշտպանության աշխատանքները, ինչպես նաեւ պետական որակավորման քննությունները:

19. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 240 կրեդիտային միավոր:
20. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 90-120 կրեդիտային միավոր:
21. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)

VII. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ

22. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտներով:
23. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տեւողությամբ առանձին կրթական մոդուլների:
24. Դասընթացները (կրթական մոդուլները), ըստ յուրացման բնույթի, բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսական ծրագրում, եւ ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

VIII. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

25. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին առաջադիմության ուսանողից պահանջվող անհրաժեշտ աշխատաժամանակի իրատեսական կանխատեսումից:
26. Կրթական արդյունքի դրական գնահատման դեպքում մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ:
27. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտների համար նախընտրելի է սահմանել ամբողջական թվերով արժեքներ:
28. Դասընթացին (կրթական մոդուլին) հատկացվող կրեդիտների թվի եւ լսարանային (կոնտակտային) ժամերի միջեւ առկա է միարժեք կապ: Լսարանային ժամերի թիվը կախված է պարապմունքների ձեւից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ

լաբորատոր պարապմունք եւ այլն), դասավանդման, ուսումնառության եւ գնահատման մեթոդներից եւ այլն:

Առկա ուսուցման համակարգի բակալավրիատում մեկ կրեդիտը 30 ժամ է՝ 14 ժամ լսարանային արժեքով:

Առկա ուսուցման համակարգի մագիստրատուրայում մեկ կրեդիտը 30 ժամ է՝ ամբիոնի նիստի որոշմամբ՝ 10 կամ 12 լսարանային ժամ արժեքով[1]: Ամբիոնը կարող է որոշել դասախոսությունների, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքների հարաբերակցությունը:
Հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում եւ մագիստրատուրայում մեկ կրեդիտը 30 ժամ է՝ 4 լսարանային ժամ արժեքով:

(28-րդ կետը փոփոխվել է 29.11.2022 թ. հրաման թիվ 1289 Ն/Մ, 13.03.2023 թ. հրաման թիվ 205 Ն/Մ)

29. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)
30. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)
31. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)
32. Դրակտիկաների յուրաքանչյուր շաբաթվան եւ պաշտպանությանը տրվում է 1,5 կրեդիտային միավոր:
33. Կուրսային աշխատանքի (մագիստրատուրայում՝ նաեւ ռեֆերատի ու զեկուցման) կատարումը եւ պաշտպանությունը գնահատվում է 2-3 կրեդիտային միավորով:
34. Բակալավրի կրթական ծրագրի ավարտական կուրսի երկրորդ կիսամյակում ավարտական աշխատանքի 7 կրեդիտային միավորը բաշխվում է հետեւյալ կերպ՝ ավարտական կուրսի առաջին կիսամյակում աշխատանքի կատարման համար ուսանողին տրվում է 1 կրեդիտային միավոր, երկրորդ կիսամյակում՝ նախապաշտպանության համար՝ 1 կրեդիտային միավոր, պաշտպանության համար՝ 5 կրեդիտային միավոր:
(34-րդ կետը փոփոխվել է 19.03.2026 թ. հրաման թիվ 160 Ն/Մ)
35. Մագիստրոսական ատենախոսության թեմայով հետազոտական աշխատանք կատարելու համար նախատեսվում է 15 կրեդիտային միավոր (ըստ կիսամյակների՝ 0, 3, 6, 6), իսկ թեզի շարադրման եւ պաշտպանության համար՝ 12 կրեդիտային միավոր: Մագիստրոսական ատենախոսության թեմայով հետազոտական աշխատանքի՝ մագիստրոսական թեզի 15 կրեդիտային միավորը բաշխվում է հետեւյալ կերպ՝ առաջին կիսամյակում աշխատանքի կատարման համար ուսանողին տրվում է 1 կրեդիտային

[1] Նույն կրթական ծրագրի շրջանակներում բոլոր դասընթացների 1 կրեդիտին համապատասխան լսարանային ժամի արժեքը պետք է լինի նույնը՝ 10 կամ 12 լսարանային ժամ արժեքով

միավոր,երկրորդ կիսամյակում՝ ատենախոսության թեմայով գիտահետազոտական աշխատանքի (հոդված) համար 2 կրեդիտային միավոր և նախապաշտպանության համար՝ 3 կրեդիտային միավոր, թեզի պաշտպանության համար՝9 կրեդիտային միավոր:
(35-րդ կետը փոփոխվել է 19.03.2026 թ. հրաման թիվ 160 Ն/Մ)

36. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)
37. (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 128 Ն/Մ 02.02.2022 թ.)
38. Մարմնակրթության համար կրեդիտային միավորներ չեն նախատեսվում
(սույն կետը փոփ. է՝ 29.11.2022 թ. հրաման թիվ 1289 Ն/Մ)

IX. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

(ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ) ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

37. Բակալավրի կրթական ծրագիրը ներառում է հետեւյալ կրթամասերը՝

1. բուհական բաղադրիչ

2. ընդհանուր մասնագիտական

3. հատուկ մասնագիտական

4. հետազոտական
(37-րդ կետը փոփոխվել է 19.03.2026 թ. հրաման թիվ 160 Ն/Մ)

38. Մագիստրատուրայի ուսումնական ծրագիրը ներառում է հետեւյալ կրթամասերը՝
ա) մագիստրոսի աստիճան շնորհելու դեպքում՝

1. ընդհանուր կրթամաս,
2. մասնագիտական կրթամաս,
3. գիտահետազոտական կրթամաս,

բ) մանկավարժության մագիստրոսի աստիճան շնորհելու դեպքում՝

1.ընդհանուր կրթամաս,
2.1 մասնագիտական կրթամաս,
2.2մանկավարժահոգեբանական կրթամաս,
3.գիտահետազոտական կրթամաս:

(38-րդ կետը փոփ. է՝ 29.11.2022 թ. հրաման թիվ 1289 Ն/Մ)

39. Կրթական ծրագրում ներառված կրթական մոդուլներն ունեն իրենց դասիչները եւ ներկայացվում են հատկացված կրեդիտներով ու լսարանային ծանրաբեռնվածությամբ: Նշվում են նաեւ առարկայի դասավանդման կիսամյակը եւ նախապայմանները:
40. Մեծածավալ դասընթացները բաժանվում են մեկ կիսամյակ տեւողությամբ առանձին կրթական մոդուլների: Դասընթացների մոդուլացումը կատարվում է՝ ելնելով նվազագույնը կիսամյակների ընթացքում դասընթացն ավարտելու սկզբունքից:
41. Դասընթացներն իրենց բնույթով բաժանվում են երկու հիմնական խմբերի՝

ա) պարտադիր դասընթացներ — բարձրագույն կրթության կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրի հիմնական դասընթացներ, որոնք դասավանդվում են պարտադիր եւ խիստ որոշակի հերթականությամբ՝ համաձայն տվյալ ուղղության մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջներին,

բ) կամընտրական դասընթացներ — պետական չափորոշիչներից բխող եւ ֆակուլտետների կողմից առաջարկվող դասընթացներ, որոնք ընտրում է ուսանողը առաջարկվող ցանկից:

Ծրագրում նշվում է նաեւ դասընթացների յուրաքանչյուր կրթամասին հատկացված կրեդիտային միավորների գումարը:

42. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար Համալսարանի ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքները եւ պրակտիկաները), որոնց համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 40՝ ներառյալ ավարտական որակավորման քննությունը:

(42-րդ կետը փոփ. է՝ 29.11.2022 թ. հրաման թիվ 1289 Ն/Մ)

43. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար Համալսարանի ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 90-120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58՝ ներառյալ մագիստրոսական ատենախոսության թեմայով գիտահետազոտական աշխատանքը (կուրսային, ռեֆերատ, էսսե, հոդված) եւ մագիստրոսական թեզի գնահատումը եւ պաշտպանությունը:

X. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

44. Սույն կարգը ուժի մեջ է մտնում օրենսդրությամբ սահմանված կարգով: